ՏԱՄՆԱՎԱՑԵՐԱՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 1746 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 11 ՓԵՏՐՈՒԱՐ 1885 (Ն. Տ.) 23 ՓԵՏՐՈՒԱՐ

ՀԱՅԵՆԻՔ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՑԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

20 վարպա

ՊԱՏՄԱՆ Ի

Տարեկան գին Կ. Պոլսոյ եւ գաւառաց համար 6 մէճիտ
Վեցամսեայ 3 »
Մանուցման տոյզը մէկ անգամի համար 2 դրուշ է. աւելի անգամներու համար սակարկութիւն կը լինի:

ՊԱՏՄԱՆ Ի

Լրագրոյս վերաբերեալ ամսակ եւ այլ գրութիւն պէտք է ուղղել Մ. Ց. Մելիբեան, Պապր Ալի ճաստէսի թիւ 20 Տ. Ճիվէլէկեան էֆենտիի տպարանը:

Տէր և Տնօրէն Մ. Ց. ՄԵԼԻՔԵԱՆ

Խմբագիր Բ. ՊՈՉԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ 9 ՓԵՏՐՈՒԱՐ

ԱԶԳԱՑԻՆ

ԱՄԵՆ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԻ

Մայիս 9ի հետեւորդ ծանօթ դէպքերէն յետոյ, յայտնի է որ ամենայն Հայոց Հայրապետի նոր ընտրութիւն նշանակուած է յառաջիկայ ապրիլին. մօտ ժամանակի մէջ ուրեմն պիտի ընտրուի կաթողիկոսն և ցմահ պիտի վարէ նա Հայաստանեայց եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութիւն:

Աշխարհն ժողովուրդք միշտ նախանձախնդիր են արժանաւորագոյն ընտրելին բազմեցնել հասարակին պաշտօններու գլուխ. սորա նորագոյն ապացոյց. տուին Ամերիկայի Միացեալ-Նահանգները Հանրապետութեան նախագահի ընտրութեան ժամանակ, որոյ պաշտօնավարութեան շրջան կը տեւէ միայն չորս տարի: Ո՛րչափ կարեւոր է ուրեմն, թէ Հայ ժողովուրդ վոյթ ունենայ արժանաւորագունին ընտրութեան ի կաթողիկոսութիւն, երբ Հայրապետական պաշտօնն ցմահ կը տեւէ ի մեզ: կը հաւատամք թէ Հայոց ժողովուրդ ըմբռնած է զայս, և թէ յառաջիկայ ընտրութեան ժամանակ նա անտարբեր չմնար բազմեցունել յաթոռ կաթողիկոսութեան արժանաւորագոյն ընտրելին, որոյ գլխաւոր և բացորոշ հանգամանքները պարտին լինել,

Նախ, կաթողիկոսական ընտրելին պէտք է կատարեալ ճանչնայ Հայ ազգն ի Թուրքիա, ի Ռուսիա և այլուր. այս առաջին պայմանն է որ անհրաժեշտաբար կը պահանջուի որ եւ է ընտրելի անձնաւորութիւն, կաթողիկոս մի որ մայր քաղաքի պալատին և հինականի խրճիթին մէջ, կոստանդնուպոլսոյ խաներու և Հայաստանի գաշտաց ու լերանց մէջ ուսումնասիրած լինի իւր ազգն, նորա բնաւորութիւնն, նորա սովորութիւնները, նորա ցաւերը և նորա պիտոյքները, ընդհանուր ազգային գահուն վրայէն կարող է մատուցանել նմա այն ծառայութիւնն, զոր մինչեւ ցարդ չեն մատուցած մեր կաթողիկոսունքն, զի մանաւանդ վերջին ժամանակները, բաց ի ներսէս Հինգերորդէն, չեմք տեսած կաթողիկոս մի, որ ոչ պայմանն իւր վրայ իրականացուներ: նոյնպէս կարեւոր է, զի մեր ընտրելին լինի ժողովուրդի զաւակ, նորա ցաւոց ցաւակից և ուրախութեանց ուրախակից եղած, որպէս զի այն գահէն, յոր պիտի կոչուի, չմոռնայ իւր ժողովուրդ-իվիշտերը և նոցա սփոփանք լինի, չօշափած լինելով Հայոն ցաւերը, բուն իսկ իւր հայրենեաց մէջ:

Երկրորդ, ընտրելի կաթողիկոսն քրիստոնէական կրօնի և Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեանց և աւանդութեանց վրայ պէտք է ունենայ բարձր, ներհուն և առողջ դաւանաբաններ. այս պայման կարեւոր է զօրաւոր ձեռքով մի կատեցնելու համար այն կրօնական պրոպականտան, զոր եղուիդները և Նոր-Ազանդները այնքան յաջողութեամբ կը կատարեն Հայոց մէջ, օգուտ քաղելով ընդհանրապէս մեր եկեղեցականաց թուլութենէն:

Երրորդ, կաթողիկոսն, իբրեւ Գլուխ Հայաստանեայց Եկեղեցւոյ, և իբրեւ մանաւանդ Պատրիարք Ռուսահպատակ Հայոց, յարաբերութիւնները ունի թէ՛ այն Պետութեանց հետ, որոյ իշխանութեանց տակ կը բնակին Հայք, և թէ՛ մանաւանդ Ռուսիոյ կառավարութեան հետ, որոյ հողին վրայ կը բնակի լինքն, կաթողիկոսն: Սոյն կրկին փափուկ պաշտօններն կարենալ վարելու համար, կաթողիկոսն պարտի ունենալ բացարձակ խոհեմութիւն և հանճար:

Չորրորդ, իբրեւ Պատրիարք Ռուսահպատակ Հայոց, կաթողիկոսին գրեթէ անձնական իրաւասութեան ներքեւ են նոցա հարիւրաւոր ծխական վարժարաններ. ուրեմն կարեւոր է, զի նորընտիր կաթողիկոսն լինի քաջուսումն, յառաջդիմասէր, և արիասիրտ, որպէս զի կարենայ դիմագրաւել ազգային գլխաւոր իրաւունքներն ամեն հանդիման վտանգներու դէմ:

Հինգերորդ, իբրեւ գերագոյն Պետ վարչութեան եկեղեցւոյ, ընտրելի կաթողիկոսը պէտք է միացած լինի ազգասէն գործերով և տնտեսագիտական բարձր տաղանդով, որպէս զի կարենայ իմաստութեամբ և տնտեսութեամբ մատակարարել Ազգին և Եկեղեցւոյ բոլոր պիտոյքները:

Վեցերորդ, Հայ ազգի կաթողիկոսն պէտք է ունենայ նշանաւոր բարեկարգիչ դիմ մը, հմուտ ազգային ներքին գործերու, ծանօթ վանական կազմակերպութեան և Կանոնքի, որպէս զի կարող լինի բարեզարդել հարիւրաւոր Հայ վանօրայքն ու հաստատութիւնները ի Ռուսիա և ի Թուրքիա, որք կա՛մ աւերակ և կա՛մ անարժան անձանց ապաստանարան և անկեալնոց դարձած են:

Եօթներորդ, ընտրելի կաթողիկոսը պէտք է ունենայ անաղարտ անցեալ և մաքուր բարոյական, որով կարենայ տիպար լինել ազգային բարոյականի, միանգամայն հանդիման Հայոց պատկառելի և ակնածելի:

Ութերորդ, առողջ միտք, առողջ մարմին, պէտք է լինի ընտրելի կաթողիկոսին էական հանգամանքներէն մին, որպէս զի կարենայ իւր բոլոր գործունէութիւն նըւիրել իւր ազգին, փոխանակ իւր անձնականին:

Վերջապէս, իբրեւ անհրաժեշտ պայման, պէտք է որ ընտրելի Հայրապետ ունենայ հայրական սիրտ և դորով ազգին համար, և հետեւաբար վայելէ գործաւոր ժողովրդականութիւն: Նմիսիոնի գահուն վրայ շատ են ուսիթները, յորս կաթողիկոսն Հայ ժողովուրդի լիակատար վստահութիւն իւր կողմն ունենալու պէտք կ'ունենայ, և այդ պարագայի մէջ ժողովրդական Հայրապետ մի, օժտեալ Հայ ազգի վստահութեամբ, կարող է կատարել մեծամեծ գործեր, քան այնպիսի մի կաթողիկոս, որոյ կարողութիւնն Հայրապետական գահուն վրայ միայն կարող լինի փորձելու:

Այսօր վստահութեամբ կարող եմք ասել, թէ ազգին բազում արժանաւոր եկեղեցականաց մէջ առաջին կը հանդիսանայ այն չքնաղ եկեղեցականն, որ իւր անձի վրայ կը միացունէ ի վերոյ նշանակեալ բոլոր պայմանները. առանց անունն յիշելու, Հայ ժողովուրդն արդէն գիտէ, թէ սոյն հոյակապ եկեղեցականն է Ամեն. Խրիմեան Հայրիկ: Թող ժողովուրդ կարդայ Հայրիկի կեանքը, ու բաղդատէ զայն յիշեալ պայմանաց հետ. և պիտի տեսնէ, զի Հայրիկ, առանց Հայրապետական գահուն վրայ բարձրանալու, իբրեւ պարզ վարդապետ, իբրեւ վանահայր, իբրև Առաջնորդ, և վերջապէս իբրեւ Պատրիարք, կատարած է արդէն այն բոլորն, զորս մեք կը պահանջեմք ընտրելի կաթողիկոսէն:

Հայ ազգը ճանչցած լինելու գլխաւոր պայմանին մէջ, կը տեսնեմք Հայրիկն իբրեւ եկեղեցական մի, որ վանքին և քաղաքին, գիւղին և մայրաքաղաքին, Կ. Պոլսոյ և Հայաստանի, Կիլիկիոյ և Փոքր Ասիոյ, Ռուսաստանի և Եւրոպիոյ մէջ, շինականի խրճիթէն սկսեալ մինչեւ աղնուականաց պալատն, ուսուցչական աստիճանէն սկսեալ մինչեւ Պատրիարքական գահուն վրայ, ճանչցած է Հայ ազգը, ուսումնասիրած է նորա կեանքը, և՛ իբրեւ նշանաւոր ազգային գործիչ, աշխատած է նորա բարեկեցութեան համար, Հայրիկ ժողովուրդի և իւր գործոց զաւակն է, ծանօթ նորա վերքերուն, զորս դարմանելու համար իւր հայրենասէր սիրտը այնքան ճիգեր թափած է: Թող ժողովուրդ կարդայ Հայրիկի գրական գործեր, կարդայ նորա սրտի արեամբ ու աչքի արցունքով գրած թուղթերը, և վկայէ թէ՝ յետ Խորենացւոյ, Եղիշէի և Լաստիվերտցւոյ, կա՛յ արդեօք Հայ դպրագէտ մի, առաւել հայրենասէր քան զԽրիմեան Հայրիկ, որուն հոգիէ չունչ երկասիրութիւններ ու վարդապետութիւններ դրեթէ կէս դարէ ի վեր անդադար յուշեցին, շարժեցին թշուառութեան մէջ անզգայացեալ ու ընդարմացեալ Հայութիւնն, և ամենէսերէք ծաւալեցին նոր գաղափար միութեան, նոր ղեկավարութեան: Տամք ուրեմն Հայրիկին ապրիլ ասպարէզ, և վստահ լինիմք, զի նորին Սրբազնութիւն ոչ երբէք պիտի մոռնայ իւր ժողովուրդն և նորա ցաւերը: Հայրապետական գահուն վրայ Հայրիկն, իբրեւ ծանօթ ի սիրուս աշխարհի ցրուեալ Հայոց, կարող է բարոյական կապ մի հաստատել նորա զանազան, մանաւանդ երկու դլխաւոր մասանց, Ռուսիոյ և Թուրքիոյ Հայոց միջեւ, որք ցայսօր ոչ նիւթական և ոչ բարոյական կապերով կապուած չեն միմեանց:

Թէ Հայրիկ օ՛րչափ բարձր, և օ՛րչափ առողջ դաղափարներ ունի քրիստոնէական կրօնի և ազգային եկեղեցւոյ մասին, զայդ չատ պայծառութեամբ ցոյց կուտան իւր կրօնական ընտիր դրուածքներ, և, ի մէջ այլոց, այն նշանաւոր պատասխանադիր, զոր Ն. Սրբազնութիւն ուղղեց Հռովմայ Պիոս Թ. Պապին, հերքելով ճարտարութեամբ վատիկանի հակաքրիստոնէական առաջարկներ: Սոյն հերքման թուղթն որ եւրոպական մամլոյ մէջ եւս մեծ նշանակութիւն ստացաւ, ցոյց կուտայ լիովին թէ Հայրիկ, Ներսէսներու և Մահակներու նման, զօրաւոր պահապան է Հայկական եկեղեցւոյ պաշտպանութեան և արժանաւոր ժառանգ նոցա Սուրբ Գրիգորի:

Հայրիկ առաջինն եղաւ որ ազգային բարոյականի կենդանի խօսքը լսել ըրաւ եկեղեցւոյ բեմէն. նա իբրեւ ճշմարիտ ուսուցիչ Աստուածաշունչ, քարոզեց իւր ժողովրդեան տնտեսագիտական առողջ դաղափարները, և ընտանեկան կեանքի սրբութիւնն ու երջանկութիւնն հռչակեց: Թող ժողովուրդ կարդայ նորա «Դրախտի Ընտանիք» և «Սիրաք և Օամուէլ» պատուական երկասիրութիւնները, յորոց կարող է տնտեսական և ընկերական ընտիր դասեր սորվիլ, և իւր հոգւոյ ու մարմնոյ հացը միանգամայն հայթայթել: Հայրիկն էր որ առաջին անգամ Կ. Պոլսոյ և Հայաստանի մէջ ազգու ձայնիւ հընչեցուց Ազգութիւն և Հայրենիք, բառերն, և յանկուցիչ պերճախօսութեամբ ցոյց տուաւ թէ՝ դոքա միշտ անբաժանելի են կրօնքէն և եկեղեցիէն: Հովիւ անձնուէր, Հայրիկ արդէն իւր պարտքը կատարեց անթերի. մեզ անկ է այժմ կատարել երախտագիտութեան սըր-

բաղան մեր պարտքն առ Հայրիկ, և օրինակ ընծայել թէ՝ Հայոց ազգ. անտարբեր չէ իւր անձնուէրներուն, գիտէ առաքինութիւնը քաջալերել և աննախանձ յօժարութեամբ պսակել այն փառաւոր ճակատներ, որոց վերայ կը չողայ եռափայլ ճաճանչն բարութեան, հայրենասիրութեան և հանճարոյ։

(Մնայեալը վաղը)

* * *

ԹԱՒՌՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Կայսերական հրամանաւ՝

Ասիրի նախորդ կառավարիչ Ֆէրիդ Ահմէտ Ֆէյզի փաշա՝ եէմէնի կուսակալ, և Պրուսայի Բէտիֆ ղօրաց հրամանատար Մուսա Բեազիմ փաշա՝ Պէնկազիի կուսակալ և զինուորական հրամանատար անուանեցան։]

Տիարպէքիրի] նախորդ կրդրոնական կառավարիչ Շաքիր էֆ. Գոնեայի կրդրոնական կառավարիչ անուանեցաւ փոխանակ Լահէմ էֆէնտիի, որ նոյն պաշտօնով Տիարպէքիր փոխադրեցաւ։

—Վեհ. Սուլթանը վիէննայի Ռումանական նորընտիր դեսպան Պ. Մավրոյէնիի առիթով Ա. կարգի Շէֆագաթի պատուանշան, և երբեմն Գերմանական դեսպանատան դրծակատար Պ. Հիրշֆելտի լծակցին Բ. կարգի Շէֆագաթի պատուանշան ընծայեց։

—Թարիզ լրագրոյ երէկուան թուով հրատարակեալ պաշտօնական ազդ մը կը ծանուցանէ թէ, երկաթուղեայ միացման գծոյ շինութեան նկատմամբ Պ. Հիրշի ներկայած առաջարկներն անընդունելի դատուելով մերժուած են, և հետեւապէս շինութեանց արտօնութիւնն յանձնուած է Օսմ. կայսերական ընկերութեան։ Բայ ասոր, մի կողմէ կայս. կառավարութեան և միւս կողմէ Պ. Հիրշի և Արեւելեան երկաթուղիները շահագործող ընկերութեան միջեւ առկախ խընդիրները կարգադրելու պաշտօնով իրաւարար առեան մը կազմուած է, որոյ Օսմ. անդամք են՝ դատական գործոց նախարարութեան խորհրդական վ.սեմ. վահան էֆէնտի և վճռաբեկ ատենին անդամ Բիլա պէյ։ Հանրօգուտ շինութեանց նախարարութեան արտօնութիւն տրուած է նախարարաց խորհրդոյ որոշած և վեհ. Սուլթանին վաւերացուցած սոյն որոշումը գործադրել։

— Արեւելեան երկաթուղեայ միացման գծոյ շինութիւնն ստանձնող դրամատիրոյ խմբին պատասխանները՝ շաբաթ օրը հանրօգուտ շինութեանց նախարարութեան պաշտօնատունն երթալով, ստորագրելին պէտք եղած պայմանագիրը։

— Երկաթուղեայ միացման գծոյ շինութեան և առկախ խնդրոց կարգադրութեան նկատմամբ որը ւած որոշումը՝ Բ. Դրան կողմէ Պ. Հիրշի և հանրօգուտ շինութեանց նախարարութեան կողմէ արեւելեան երկաթուղեայ շահագործող ընկերութեան ծանուցուեցաւ պաշտօնապէս։ Պ. Հիրշ և ընկերութիւնը մի ամսոյ պայմանաժամու մէջ պարտաւոր են անուանել իրենց լրատարները, որպէս նախատեսած է պայմանագիրը։

— Դատական գործոց առաժաեայ նախարար Քեամիլ փաշա և հանրօգուտ շինութեանց նախարար Բայիճ փաշա շաբաթ օրը Բ. Դուռն երթալով, ինչ ինչ կարեւոր հրամանները ստացան Մեծ-եպարքոս Բարձր. Սայիտ փաշայէն։

—Ազատութեան դեսպան Պ. Քամիլէ շաբաթ օրը Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ Մեծ-եպարքոս Բարձր. Սայիտ փաշային և արտաքին գործոց նախարար վսեմ. Ասիմ փաշային հետ։

Նոյն օրն Անգլիական, Գերմանական և Ֆրանսական դեսպանատանց Ա. թարգմանք եւս տեսակցութիւններ ունեցած են արտաքին գործոց նախարարին հետ։

— Դաւրէժէն եկած մտնաւոր հեռագրեր կը յայտնեն թէ, Պօլսոյ Պարսկական դեսպան Միրզա Մօհսին խան անդ. հասեր և անտի Թեհրան ուղեւորեր է։

— Արեւելեան Րումէլիի ազատականութեան քննիչ Պորթուի.ք փաշա Փիլիպէէն մայրաքաղաքս եկած է հրաժեշտով։

—Ցունայ Պատրիարքարանի Ս. Սինոդն իւր հինգշաբթի աւուր նըստին մէջ՝ Պատրիարքական փոխանորդ անուաներ է զՏ. Գաբրիէլ Եաթրուտաքին փոխանակ Տ. Լօմպուլիսի, որ Փիլիպէի Մետրապոլիտ անուանեցաւ։

— Յանապէն կը յայտնուին թէ, քաղաքին զօրանոցին մէջ վառօդ պայթեր և երեք զօրք իրենց կեանքը կորուսեր են։

— Մարմարա կղզոյ բնակիչք չնորհակալագ ուղերձ մը մատուցին առ վեհ. Սուլթանն, այն կայսերական նպաստից համար, զորս Ն. Կ. Վեհափառութիւնը բարեհաճեցաւ չնորհել ի սիրոյ հրդկիզելոյ։

—Ցառաջիկայ մարտ ամսոյ մէջ նոր վարժարան մը պիտի բացուի ընդ հովանաւորութեամբ Համարակալութեան Ատենի։ Գլխաւորապար ելեւմտից և Պան.քաներու վերաբերեալ դիտութիւնք պիտի ուսուցանուին այս վարժարանին մէջ, որ այսուհետեւ պիտի հայթայթէ տէրութեան եվտապէտ պաշտօնատարները։

— Սիմամսոյ հեռեւեալ տեղեկութիւնները կուտայ երկաթուղեայ միացման գծերու շինութեան նըկատմամբ Բ. Դրան և Օսմանեան ու Բոնմուալ տ'Լոքնթի պանքաներուն կազմած դրամատնարոյ խըմբին միջեւ կնքեալ պայմանագրին վրայ, որ տաս պայման կը պարունակէ եղեր։

Ցիշեալ երկու դրամական հաստատութիւնք յանձն առած են մէկ ամսոյ պայմանաժամու մէջ ընկերութիւն մը կազմել, 30 միլիոն դրամագլխով, 50,000ական ֆրանքնոց 600 բաժինի վրայ, որք նոյնպէս պիտի կրնան ստորաբաժանուիլ 500ական ֆրանքնոց բաժիններու։ Այս դրամագլխին չորրորդ մասին վճարումէն յետոյ, ընկերութիւնը վերջնապէս կազմուած պիտի լինի և իւր կեդրոնատեղին ի Կ. Պոլիս, և վարչական խորհուրդն ի Փարիզ պիտի գտնուին։ Ընկերութիւնն Իսթիւպէէն մինչեւ Վրանիա և Սալըմ-Պէյէն մինչեւ Վաքարել պիտի շինէ միացման գիծերը, ուն մի հազարամէթրը 175,000 ֆրանկի հաշուով։ Պէտք եղած հողերն ընկերութեան պիտի յանձնուին կայսերական կառավարութեան կողմէ, ընկերութիւն ընթացիկին հաշուով վարկ մը պիտի բանայ կայսերական կառավարութեան, շինութեան և դնելի հողերու ծախուց բաւելու չափ, և 0/0ին 6 տոկոսով։ Այս գումար մաս առ մաս պիտի վճարուի 25 տարւոյ մէջ և տոկոսեաց ու դլխամասի վճարութիւններն առ ժեն տարւոյ սպրիլ 1/13ին սեղի պիտի ունենան 1886 սպրիլ 1/13 էն սկսեալ։

Շէնուելիք դիծերն, անոնց շահագործումէն տէրութեան ընտող գուտ հասութիւնը բաժինն և Եվլաղիի ու Պրուսայի ոչխարաց տուրքին մէկ մասը գրաւ պիտի տրուին ընկերութեան։ Օսմ. Պանքան պիտի գանձէ այս տուրքերն, և հաւաքման, դրամատիրութեան և փոխադրութեան ծախքերն Օսմ. կաշկառատութեան պիտի վերադրուին։ Ամեն տարի դրամագլխոյ և տոկոսաց ընծայելիք հաշիւը պիտի որոշուի։ Ապահովագրոյ հատուցման համար ընկերութեան յատկացեալ տարեկան որոշ բաժինն եթէ աւելնայ, աւելորդն արքունի դանձուն պիտի յանձնուի, իսկ եթէ պակսի, պակասը տէրութեան մաքսատանդվրայ բաշուած հաշիւով մը պիտի ճարուի։ Եթէ տէրութիւնն արեւելեան երկաթուղեայ դիծերը Պ. Հիրշի ձեռքէն առնու, նոր կազմուելիք ընկերութեան պիտի յանձնէ, եթէ ինք չուզէ ուղղակի բանեցնել։ Ասոնք ամբ են յամառօտիւ ընկերութեան և Բ. Դրան միջեւ կնքեալ պայմանք։

— Օսմ. արժեթղթոց (քոնսոլիտէ) միացման գործողութիւնք մայրաքաղաքիս մէջ ևս սկսած լինելով, նոր արժեթուղթ շաբաթ օրը Դալաթիոյ մէջ չրջաբերութեան հանուելոյն ի դին 19 պրուշ։

— Ամերիկեան դեսպան Ուալիս զօրավարն այսօր վերստին պատիւ պիտի ունենայ վ.Ե. Սուլթանին ներկայանալու։

— Նիկոմիդիոյ մէջ սկսեալ նոր բանակ մը չինութիւնն աւարտած լինելով, քանի մ'օր առաջ բանտարկեաք հին բանակէն նորը վոխադրուեր և այս առթիւ ոչխարներ մորթուեր և վ.Ե. Սուլթանին կենաց համար աղօթքներ կարդացուր են։

—Վերջին թղթակցով եկած հելլենական լրագիրք Պ. Թրիքուբիր նախարարութեան անկման պատճառներուն վրայ հետեւեալ տեղեկութիւնները կը բերեն մեզ։

Եվտացոյցի վիճաբանութեան միջոցին, ընդդիմադիր կուսակցութիւնը՝ նախարարական կուսակցութեան վերաբերող քանի մ'երեսփոխանոյ բացակայութենէն օգուտ քաղելով, վոտահութեան խնդիրն յուզեր է։ Պ. Բէթմէձա երեսփոխանն, յանուն ընդդիմադիր կուսակցութեան խօսելով, խնդիրն առաջարկեր է, ըսելով թէ եվտական կուսակցութիւնն երեսփոխանական ժողովոյ վրայ հարկ կը դնէ ոչ եւս իւր վստահութիւնը չնորհել այնպիսի կառավարութեան մը որ պատճառ եղած է երկրին եվտական ոպրալի վիճակին։ Կառավարական կուսակցութիւնը պահանջեր է վիճաբանութեան ենթարկել գոյս առաջարկ, բայց ընդդիմադիր կուսակցութիւնը վիճաբանութիւնը մերժելով, անմիջապէս քուէի դնել պահանջեր է վստահութեան խնդիրը։ Նախագահութիւնն Պ. Թրիքուբիի մէկ կողմի պատասխանէն յետոյ, որ այս վիճաբանութեան դադրումն պատասխանատուութիւնը ընդդիմադիր կուսակցութեան վրայ կը նետէր, երեսփ. ժողովը 104 ի դէմ 108 ձայնիւ ընդուներ է ընդդիմադիր կուսակցութեան առաջարկը։

Քաղաքականութենէն յետոյ, նախարարաց խորհուրդը դումարուեր և Պ. Թրիքուբիի միջոցաւ թագաւորին ներկայեր է իւր հրաժարականը։ Քաղաքական օրն իսկ կառավարական կուսակցութեան վերաբերող 6 երեսփոխանք ազատնք հասած էին, ուրիշ 3 երեսփոխանք այ երկու օր վերջն հասած էին, որով Պ. Թրիքուբի միշտ ապահով մեծամասնութիւն մ'ունեցած էր երեսփոխանական ժողովոյ մէջ։ Պատասխանատու առաջարկին ընդունելութեան օրը մեծ ցոյց մը տեղի ունեցեր է ի նպաստ ընդդիմադիր կուսակցութեան դլուխ Պ. Տելիհանիի, որ կեցցէներու որոտընդոստ և երկարաձիգ աղաղակներով մինչեւ տուն տարուեր է։ Քանի մը մեքենայիչներու թելադրութեամբ՝ ամբոխն արքայական պալատն երթալով, թագաւորը տեսնել ուզեր էն, բայց Սա անհանգստութեան պատճառ չէ ուզեր երեսիլ ժողովրդեան և իւր թիկնապահնին միջոցաւ պատասխաներ է ցոյցարարներուն։

Թէպետ շաբաթ օրն ազատնքն վեցար. 20 թուով հեռագիր մը ծանուցած էր թէ, Պ. Տելիհանի յաջողած էր նախարարութիւն մը կազմել, բայց ի վերջոյ ազատնքն վեցար. 21 թուով ուրիշ հեռագիր մը կ'ըսէ թէ, թագաւորը չուզելով ընդունիլ երեսփ. ժողովը լուծելու առաջարկը, Պ. Տելիհանի չէ ուզեր կազմել նոր նախարարութիւն։ Ասոր վրայ թագաւորը Պ. Թրիքուբին հրաւիրելով, յետ երկար խորհրդակցութեան, այս վերջինն ետ առեր է իւր հրաժարականն, և հետեւապէս նախորդ նախարարութիւնը վերահաստատուեր է իւր պաշտօնին մէջ։ Պ. Թրիքուբիի նոր պատասխանները ցոյցեր եղեր են։

—Ֆրանսական Կոլոա լրագիրը նամակ աշխատութիւն մը հրատարակած է այն պինուորական զօրութեանց վրայ զոր Անգլիա կը պահէ ի Հնդկաստան։

Անգլիա երեք զօրաբանակ ունի Հնդկաստանի մէջ։ 1. Պէնկալայի (մայրաքաղաք Կալկաթա) բանակը, որ 106 հազար հոգիէ կը բաղկանայ, որոց 40 հազարը միայն անգլիացիք։ 2. Մատրասի բանակը, 47,000 հոգիէ բաղկացեալ, որոց 12,000ը միայն անգլիացիք։ 3. Պոմպայի բանակն, 38,000 հոգիէ բաղկացեալ, որոց 26,500ը միայն Հընդիկ են։ Այս զօրաբանակներըը 36 վաշտ հետեւակազօրէ կը բաղկանան, իւրաքանչիւրը 1,400 հոգիէ կազմեալ, ընդհրամանատարութեամբ տեղակալ-զընդապետի մ'և երկու հպատարաժետաց։ Հեծելազօրը չորս զօրագունդ է կը բաղկանայ, որոց իւրաքանչիւրը 650–700 հոգիէ կազմեալ։ բաց ասոնէ, կան նաև 3 գունդ նիզակաւոր և 3 գունդ Հիւսար զօրք։ Թնդանօթաձիգ՝ զօրքը կը բաղկանայ 48 դասակի 300 թնդանօթներով, ամեն կարգի մեծութեամբ։

ՀԵՌԱԳԻՐ

—o—

Լոնտրա 21 փետր.

Երեսփ. ժողովն որոշեց յառաջիկայ երկուշաբթի օրը (այսինքն այսօր) վիճաբանութեան ենթարկել Սըր Ս. Նորթքոթի ներկայած պարտաւանայ առաջարկը։

ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Երեսփոխանական Պատրիարք Ամենայն Սըրազան՝ երէկ առաւօտ Մայր եկեղեցի իջնելով, քարոզ խօսեցաւ, յորում գլխաւորաբար դրատուեց նորընտիր Պատրիարք Ամենայն Յարութիւն Սրբազանի ընտիր բարեմասնութիւններն ու առ ազգն մատուցած ծառայութիւնները, և Սրսուխոսանութեան ու վարչական ժողովոյ ոչնակցութեան հարկը բացատրուց՝ նորընտիր Պատրիարքին պաշտօնավարութիւնն արդիւնաւոր դործելու համար։ Ապա իւր հրաժեշտի ոչխոյնը տուաւ ժողովրդեան

—Ա՛ն, Հայր Ծօղէ, նոյն ինքն էր գալ Ծովասունգ-

ները ։

Հայր Ծօղէ ձեռքը դնելուն պէս ։ ։ ։ ասիկա

—Ես, ես եմ Հայր Ծօղէ, ուղղափառ կաթողիկէ

Ծովասունգները ։ Ինչո՞ւ կ՚ուզէք զիս սպաննել ։

Ես ձեզի բան մը չեմ ըրած ։ Ես ձեզ ոչ մէկ վնաս

տուած եմ ։ Ինչո՞ւ կ՚ուզէք զիս սպաննել ։

Ծովասունգները իրարու նայեցան ։ Ապա ծերը

ըսաւ ։

—Ինչո՞ւ կ՚ուզենք սպաննել քեզ ։ Ինչո՞ւ կ՚ուզենք

սպաննել ։ Ինչո՞ւ կ՚ուզենք սպաննել ։

Հայր Ծօղէ ։

—Ա՛ն, Հայր Ծօղէ, նոյն ինքն էր գալ Ծովասունգ-

ները ։

Հոգին ։

—Ես հասկնամ ։

—Ես հասկնամ ։

Հայր Ծօղէ ։

—Ես, ես եմ Հայր Ծօղէ, նոյն ինքն էր գալ Ծովասունգ-

ները ։

Հոգին ։

—Ա՛ն, Հայր Ծօղէ, ինչո՞ւ կ՚ուզէք զիս սպաննել ։

—Ինչո՞ւ կ՚ուզենք սպաննել քեզ ։ Ինչո՞ւ կ՚ուզենք

սպաննել ։ Ինչո՞ւ կ՚ուզենք սպաննել ։

Հայր Ծօղէ ։

—Ա՛ն, Հայր Ծօղէ, ինչո՞ւ կ՚ուզէք զիս սպաննել ։

—Ինչո՞ւ էլաշխատել նրանց հետ իմ ամբողջ ուժերով, իմ ողջ սիրտս և հոգիս . . . :

—Մի՛ , սիրելի , ընկեր Ներսես , հոգիս , համբերի՛ր . . . Ա՛խ , ես ինչպե՞ս կարող եմ . . . Ա՛խ կորցրի ես իմ ամենաթանկագին գանձը , իմ ընտանիքի միակ լույսը , որի համար ես ապրում էի , և որի համար ես պատրաստ էի ամեն զոհողության :

Ես չեմ կարող ինձ պատկերացնել առանց նրա :

—Ես , ընկեր Ներսես , ես էլ չեմ կարող ինձ պատկերացնել առանց նրա :

—Ես , ես . . . Ի՞նչ ես ուզում ասել :

—Ա՛խ , ընկեր Ներսես , ես էլ ունեի մի ընտանիք , որի համար ես ապրում էի , որի համար ես աշխատում էի , և որի համար ես պատրաստ էի զոհել ինձ :

—Ընկեր Ներսես , ես էլ ունեի մի ընտանիք , որի համար ես ապրում էի , որի համար ես աշխատում էի , և որի համար ես պատրաստ էի զոհել ինձ :

—Ա՛խ ,